ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Գ. Շախկյան
(անուն, ազգանուն)

« 20 » հոկտեմբերի 2025թ.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ, ԿՐՃԱՏՄԱՆ

PR-7.10-7.11

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Նազիկ Աբգարյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը՝ 20.10.2025թ.

Երևան 2025

Բովանդակություն

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ 3
2. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ 3
3. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ 4
4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 4
5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳԸ 8
6. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ 9

1. Կիրառման ոլորտը

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է համապատասխանության գնահատման մարմինների (այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացրած հավատարմագրման ոլորտի ընդլայնմանն ու կրճատմանը ներկայացվող հավատարմագրման պահանջները և կարգը:

1.2 Սույն ընթացակարգը մշակվել է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի 7.10 և 7.11 կետերի պահանջների համաձայն:

2. Նորմատիվ վկայակոչումները

Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ: Սույն փաստաթղթում վկայակոչված են հետևյալ փաստաթղթերը՝

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք, 2012 թվականի փետրվարի 8

«Հավատարմագրման չափանիշները, համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման, գնահատումների կարգը և ժամկետները» ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի ապրիլի 2-ի N 915-Ն հրամանի հավելված

PR-7 Հավատարմագրման ընթացակարգը և ընդհանուր պահանջները

PR-7.8 Հավատարմագրման վկայագրի բովանդակությանը և ձևակերպմանը, ինչպես նաև վերաձևակերպմանը ներկայացվող պահանջները

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող հավատարմագրման մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

3. Տերմինները և սահմանումները

Սույն ընթացակարգում կիրառված են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000 և ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտներով սահմանված տերմիններն ու սահմանումները:

4. Ընդհանուր դրույթները

4.1 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման և կրճատման գործընթացներն իրականացվում են էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի ապրիլի 2-ի N 915-Ն հրամանի հավելվածի, PR-7-ի, ԱՐՄՆԱԲ-ի ընթացակարգերի, ԵԱՏՄ պահանջների և սույն ընթացակարգի պահանջների հիման վրա:

4.2 Հավատարմագրման ոլորտի ընդլայման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ **«https://e-accreditation.armnab.am/»** էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ դրա խափանման դեպքում՝ **«armnab@armnab.am»** էլեկտրոնային փոստով.

1) փորձարկման, տրամաչափարկման, բժշկական լաբորատորիաների դեպքում՝

- հավատարմագրման հայտը,

- ընդլայնման ենթակա հավատարմագրման ոլորտը,

- կիրառվող ստանդարտների, ընթացակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և իրավական ակտերի ցանկը,

- ընդլայնվող ոլորտի շրջանակում աշխատանքներ իրականացնող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը,

- որակավորման ստուգմանը և/կամ միջլաբորատոր համեմատություններին (PT/ILC) մասնակցելու վերաբերյալ տեղեկատվությունը և Պլանը (ՓL, SL-ի համար**),** որակի արտաքին գնահատման (EQA) ծրագրերին մասնակցության վերաբերյալ (ԲL-ի համար)**,**

- լաբորատորիայի ստանդարտ (տիպային) նմուշներով հագեցվածության վերաբերյալ տեղեկատվությունը,

- տեխնիկական ռեսուրսներով հագեցվածությունը,

- տեղեկատվություն նմուշառման համար անհրաժեշտ չափման միջոցներով (նմուշառման գործիքներով) հագեցվածության վերաբերյալ (անհրաժեշտության դեպքուում)

- փոփոխված կառավարման համակարգի փաստաթղթերի պատճենները,

- բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը (առկայության դեպքում),

2) արտադրանքի սերտիֆիկացման մարմինների դեպքում՝

- հավատարմագրման հայտը,

- ընդլայնման ենթակա հավատարմագրման ոլորտը,

- կիրառվող ստանդարտների, ընթացակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և իրավական ակտերի ցանկը,

- ընդլայնվող ոլորտի շրջանակում աշխատանքներ իրականացնող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը,

- արտադրանքի սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտադրանքի փորձարկման իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը,

- տեղեկատվություն նմուշառման գործիքներով հագեցվածության վերաբերյալ,

- փոփոխված կառավարման համակարգի փաստաթղթերի պատճենները,

- բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը (առկայության դեպքում),

3) կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմինների դեպքում՝

- հավատարմագրման հայտը,

- ընդլայնման ենթակա հավատարմագրման ոլորտը,

- կիրառվող փաստաթղթերի (ստանդարտներ, ընթացակարգեր և այլն) ցանկը,

- ընդլայնվող ոլորտի շրջանակում աշխատանքներ իրականացնող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը,

- փոփոխված կառավարման համակարգի փաստաթղթերի պատճենները,

- բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը (առկայության դեպքում),

4) հսկողություն (այդ թվում՝ ստուգաչափում) իրականացնող մարմինների դեպքում՝

- հավատարմագրման հայտը,

- ընդլայնման ենթակա հավատարմագրման ոլորտը,

- կիրառվող փաստաթղթերի (ստանդարտներ, ընթացակարգեր, տեխնիկական կանոնակարգեր և այլն) ցանկը,

- ընդլայնվող ոլորտի շրջանակում աշխատանքներ իրականացնող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը,

- տեղեկատվություն հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ չափման միջոցների (փորձարկման սարքավորումների) վերաբերյալ,

- փոփոխված կառավարման համակարգի փաստաթղթերի պատճենները,

- բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը (առկայության դեպքում),

- որակավորման ստուգմանը և/կամ միջլաբորատոր համեմատություններին (PT/ILC) մասնակցելու վերաբերյալ տեղեկատվությունը և Պլանը (ստուգաչափում իրականացնողների համար**),**

5) որակավորման ստուգում իրականացնողների դեպքում՝

- հավատարմագրման հայտը,

- ընդլայնման ենթակա հավատարմագրման ոլորտը,

- տեղեկատվություն որակավորման ստուգման նմուշների վերաբերյալ,

- տեղեկատվություն ստանդարտ (տիպային) նմուշներով հագեցվածության վերաբերյալ,

- կիրառվող փաստաթղթերի (ստանդարտներ, ընթացակարգեր) ցանկը,

- տեխնիկական ռեսուրսներով հագեցվածությունը

- ընդլայնվող ոլորտի շրջանակում աշխատանքներ իրականացնող անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը,

- փոփոխված կառավարման համակարգի փաստաթղթերի պատճենները,

- բողոքների վերաբերյալ տեղեկատվությունը (առկայության դեպքում):

4.3 Հավատարմագրման ոլորտի կրճատումն իրականացվում է՝

1) ՀԳՄ-ի հավատարմագրման հայտի հիման վրա,

2) հավատարմագրման կասեցման հիմքերը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում,

3) պարբերական, արտահերթ գնահատման, գործունեությանը հետևելու արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում, որոնք նշված են PR-7 ընթացակարգի Գ հավելվածում,

4) հավատարմագրվելուց հետո մինչև հաջորդ պարբերական գնահատումը ՀԳՄ-ի կողմից գործունեության հետևման (witnessing) դիմում/գրություն չներկայացնելու դեպքում, ինչի արդյունքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից տվյալ սխեմայով/կառավարման համակարգի տեսակով/օբյեկտով գործունեության հետևում չի իրականացվել, բացառությամբ, երբ ՀԳՄ-ն այդ ժամանակահատվածում հայտեր չի ստացել:

4.4 Հավատարմագրման ոլորտի կրճատման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ **«https://e-accreditation.armnab.am/»** էլեկտրոնային համակարգի միջոցով, իսկ դրա խափանման դեպքում՝ **«armnab@armnab.am»** էլեկտրոնային փոստով.

1) հավատարմագրման հայտը,

2) կրճատված հավատարմագրման ոլորտը,

3) կիրառվող ստանդարտների, ընթացակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և իրավական ակտերի ցանկը,

4) տեխնիկական ռեսուրսներով հագեցվածությունը,

5) արտադրանքի սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտադրանքի փորձարկման իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը (արտադրանքի ՍՄ-ի համար),

6) համապատասխանության սերտիֆիկացում իրականացնելու համար անհրաժեշտ չափման միջոցներով (նմուշառման գործիքներով) հագեցվածության վերաբերյալ տեղեկատվություն (արտադրանքի ՍՄ-ի համար),

7) լաբորատորիայի ստանդարտ (տիպային) նմուշներով հագեցվածության վերաբերյալ տեղեկատվությունը (ՓԼ-ի համար):

4.5 Հավատարմագրման ընդլայնման, կրճատման վերաբերյալ որոշումն ընդունվում է հավատարմագրման կոմիտեի (այսուհետ՝ ՀԿ) կողմից:

4.6 Հավատարմագրումը ընդլայնված կամ կրճատված է համարվում ՀԿ-ի կողմից որոշման ընդունման ամսաթվի հաջորդ աշխատանքային օրվանից:

5. Հավատարմագրման ընդլայնման կարգը

5.1 Հավատարմագրման ընդլայնման գործընթացն իրականացվում է հավատարմագրման գործընթացին համապատասխան՝ համաձայն էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի ապրիլի 2-ի N 915-Ն հրամանի հավելվածի, PR-7-ի, ԱՐՄՆԱԲ-ի ընթացակարգերի և սույն ընթացակարգի պահանջների:

5.2 Հայտը ստանալուց հետո ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի տեղակալը նշագրման թերթիկի միջոցով ընդլայնման գործընթացի համար նշանակում է այն գնահատողին, ով իրականացրել է տվյալ ՀԳՄ-ի հավատարմագրման գործընթացը:

5.3 Հավատարմագրման ընդլայնման ժամանակ.

- գնահատվում է ՀԳՄ-ի տեխնիկական իրազեկությունը, թե որքանով է նա իրազեկ իր գործունեության նոր ոլորտներում ճշգրիտ արդյունքներ ստանալու համար՝ հավատարմագրման ոլորտի ընդլայնման հայտին համապատասխան,
- գնահատվում են կառավարման համակարգի այն տարրերը, որոնք առնչվում են գործունեության նոր ոլորտներին:

5.4 ՀԿ-ն սահմանված ժամանակահատվածում որոշում է կայացնում ՀԳՄ-ի հավատարմագրման ընդլայնման կամ ընդլայնումը մերժելու վերաբերյալ: Մերժման դեպքում ԱՐՄՆԱԲ-ը տեղեկացնում է ՀԳՄ-ին՝ նշելով մերժման հիմքերը:

5.5 ՀԿ-ի կողմից դրական որոշման ընդունման դեպքում ԱՐՄՆԱԲ-ը 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է հավատարմագրման պայմանագրին կից համաձայնագիրը, վերաձևակերպում հավատարմագրման վկայագիրը՝ համաձայն PR-

7.8 ընթացակարգի, հաստատում ընդլայնվող ոլորտը կամ ամբողջ ոլորտը՝ ներառելով ընդլայնվածը:

5.6 Հավատարմագրման ընդլայնման գործընթացը կարող է համատեղվել ՀԳՄ-ի պարբերական գնահատման հետ: Այդ դեպքում ՀԳՄ-ն հայտը ներկայացնում է նշված գնահատումից առնվազն 4 ամիս առաջ:

5.7 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման դեպքում հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետը չի փոփոխվում:

6. Հավատարմագրման կրճատման կարգը

6.1 ՀԳՄ-ի հավատարմագրման հայտի հիման վրա հավատարմագրման ոլորտի կրճատումն իրականացվում է առանց տեղում գնահատման:

6.3 Հայտը ստանալուց հետո ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի տեղակալը նշագրման թերթիկի միջոցով կրճատման գործընթացի համար նշանակում է այն գնահատողին, ով իրականացրել է տվյալ ՀԳՄ-ի հավատարմագրման գործընթացը: Գնահատողը 15 աշխատանքային օրվա ընթացքում նշված փաստաթղթերը վերլուծում և հաշվետվություն է ներկայացնում ՀԿ-ին՝ հավատարմագրման կրճատման վերաբերյալ որոշում կայացնելու համար:

6.4 Եթե հավատարմագրման ոլորտի կրճատումը տեղի է ունեցել պարբերական, արտահերթ գնահատման կամ հավատարմագրման կասեցման արդյունքում, ապա ՀԿ-ի կողմից կրճատման վերաբերյալ որոշումն ընդունվելուց հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում, ՀԳՄ-ն փոփոխված փաստաթղթերի փաթեթը էլեկտրոնային ներկայացնում է ԱՐՄՆԱԲ:

6.5 Կրճատված հավատարմագրման ոլորտը հաստատվում է ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի կողմից, այնուհետև վերաձևակերպվում է հավատարմագրման վկայագիրը՝ համաձայն PR-7.8 ընթացակարգի:

6.6 Հավատարմագրման ոլորտի կրճատման դեպքում հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետը չի փոփոխվում: